

«Բայց ու՛ր է նա-այդ պանթեօնը, ու՛ր հայկական *ասրածնաբանարդ*, մեր սրբերի հանգրուանը, սերունդների ուխտավայրը...

Դա մեր ամբողջ վատաբախտ հայրենիքն է-ծայրէ ծայր սերմանած, պարարտացած հերոսների նշխարներով...»¹:

Միքայել Վարանդեան

ԺԱՄԱՆԱԿԸ ԵՎ ԻՐ ՀԵՐՈՍՆԵՐԸ*

Յուրաքանչյուր սերունդ նախապատրաստում է իրեն բնորոշ **հերոսների** ծնունդը և գիտակցում ու արժևորում է նրանց գործողությունների այն հանրագումարը, որոնք դիտվում են իբրև հերոսության և հերոսականության դրսևորումներ:

Հակառակ համաշխարհայնացման համահարթեցնող գործառույթի մասին միակողմանի պատկերացումներին՝ մեր օրերում ևս իրական հերոսները չեն տարրալուծվում ու անհետանում: Ավելին՝ երբ արտաքին ու ներքին մարտահրավերների մեծացմանը զուգընթաց նվազում է դրանց դիմակայելու հավաքական կամքը, ազգերն իրենք են զգում վառ անհատականությունների ու հերոսների կարիքը:

Անշուշտ, սա չի նշանակում, որ լինելով դարաշրջանի հայելին՝ ժամանակի հետ միասին հերոսները չեն փոխում իրենց գործառույթների բնույթն ու ուղղվածությունը, նպատակն ու տարողությունը: Ավելի քան ակնհայտ է, որ պատմությունը որպես մեծ մարդկանց ու նրանց մեծ գործերի շարան դիտարկող **Թոմաս Կարլայլի**² 19-րդ դարին բնորոշ դասական հերոսապաշտության մտակաղապարները² մեխանիկորեն չեն կարող տեղափոխվել մեր օրերի բարոյաքաղաքական ըմբռումների դաշտ:

Դեռևս ֆաշիզմի ու խորհրդային ամբողջատիրության ժամանակներին այս համոզմունքն իր արտացոլումն է գտել **Բերտրան Ռասելի**³, նաև մեր հայրենակից **Մանուել Մարգսյանցի** աշխատություններում⁴, որոնք,

*Ընդունվել է տպագրության 11.09.2013:

1 **Միքայել Վարանդեան**, Վերածնունդ հայրենիքը և մեր դերը, Ժընև, Հրատ. Հ.Յ. Դաշնակցութեան, 1910, էջ 39:

2 Stn On Heroes, Hero-Worship, and The Heroic in History. The Project Gutenberg eBook of Heroes and Hero Worship, by **Thomas Carlyle**. Gutenberg.org/catalog/world/readfile?fk_files=3342021.

3 Stn **Рассел Б.** История западной философии. В 3 кн.: 3-е изд., испр. / Подгот. текста В. В. Целищева. – Новосибирск: Изд-во Новосиб. ун-та, 2001. http://www.krotov.info/lib_sec/17_r/rass-00.html

4 Stn **Мануэль Саркисянц Мерида**. Томас Карлейль и «божественные фельдфебели-инструкторы по строю» для беднейших англичан. В кн. «Английские корни немецкого фашизма». <http://www.scepsis.net/library/id-2069.html>

ԽՄԲ համահայկական հանդես, 2013 թվականի 3 (43) համիս-մեպրելներ, 3 (43) համիս-մեպրելներ, 2013

ցնցված լինելով ֆաշիզմի բերած արհավիրքներից, զբաղվում էին Թոմաս Կարլայլից «մինչև Նիցշե ու Հիտլեր» ձգվող արտաքին-ձևական զուգահեռների ստեղծմամբ: Բայց դա, ինչպես ասում են, «պահի արձագանքն» էր, որովհետև այսօր ֆաշիզմն ու խորհրդային ամբողջատիրությունը պատմության գիրկն են անցել, իսկ հերոսների կարիքը մեր օրերում էլ է զգացվում: Սակայն չպետք է մոռանալ, որ ժամանակի ընթացքում ռազմապատմական դեմքերի պաշտամունքի կողքին մարդկությունը ստեղծել է նաև աստվածատուր հատկանիշներով օժտված **հերոս-մարգարեների, հերոս-արվեստագետների, հերոս-օրենսդիրների** և այլ օրինակելի կերպարներ:

Մինչդեռ, **արքեպիսկոպոսի հերոսների** դերակատարության **ամբիվալենտության** (տարաթեքության) գիտակցումից դեռևս հեռու գտնվող հայ հանրության ներսում մինչև վերջերս իշխում էր այն պատկերացումը, համաձայն որի՝ ազգի հերոսը հայրենիքի սահմանների պաշտպանության, դրանց ամբողջացման ու ոտնահարված արդարության վերականգնման համար պայքարող անհատականությունն է, ով պատրաստ է այդ նպատակների համար զոհաբերել մարդու համար ամենաթանկը՝ կյանքը:

Բայց վերջին 20 տարիներին՝ անկախ պետականության պայմաններում, երբ Հայաստանի յուրաքանչյուր նոր իշխանություն ստեղծեց հերոսների իր «պանթեոնը», մեզանում ձևախեղվեց նաև այդ պատկերացումը: Ակնհայտ դարձավ, որ մեր նորագույն «հերոսների» իրական գործառնությունը հարստություն կորզելն է՝ Ղարաբաղյան պատերազմի վերհուշի շահարկման միջոցով: Նման **քվազի-հերոսների** հաղթարշավը անկախ Հայաստանում հերոսապաշտությունը նպատակից վերածեց միջոցի: Ուստի մարտի դաշտում իրենց փառքով պսակած իրական հերոսները լռեցին, քանի որ անելիք չունեին սեփականության վերաբաշխման համար «պատերազմում»:

Այս պայմաններում հերոսության ու հերոսականության մասին հանրային պատկերացումների հողովույթը մեզանում ևս սկսեց արագացված տեմպերով հաղթահարել արևմտյան մշակույթի՝ 19-20-րդ դարերում անցած ուղին: Դրան մեծապես նպաստեցին նաև «արյան մաքրության» և հարևանների հանդեպ գերակայության մասին անգրագետ պատկերացումներով առաջնորդվող կեղծ-նժդեհական «տեսությունները»: Մեր նորագույն «նիցշեները», հաճախ իրենք էլ դա չգիտակցելով, անցած երկու տասնամյակում արեցին այն, ինչի վրա որոշ երկրներ միլիարդներ են ծախսել՝ սեփական քաղքենուն համոզելու համար, թե իբր հերոսների պաշտամունքը «սովորական ֆաշիզմ» է:

Ղարաբաղյան պատերազմի վերհուշը շահարկողների՝ սեփական հայրենակիցներին շահագործելու փաստը մեր հասարակության ներսում նկատելիորեն ձևախեղել է հայ հերոսի ավանդական կերպարը, իսկ Հայոց բանակում որպես «ազգային գաղափարախոսություն» քարոզվող բիրտ ուժի պաշտամունքի վրա հիմնված կեղծ-նժդեհականությունը նույն ավերներն է գործել երիտասարդ սպաների ու զինվորների հոգիներում:

Բայց միթե մենք հասել ենք ազգային ու սոցիալական խնդիրների լուծման այն հանգրվանին, երբ կարող ենք ապրել ու գոյատևել նման քվազի-հերոսների պաշտպանության ներքո: Միթե մեր հայրենքն ազատագրված

է արդեն՝ այդ երկմիասնական խնդրի լուծման արտաքին ու ներքին կշռույթներով, թե՛ պարզապես մեր «հիշողության հարթակները» խճողվել են այնպիսի կերպարներով, որոնք ընկալելի են միայն մեր դարաշրջանի ձևախեղված պատկերացումների համատեքստում:

Հարցի պատասխանը գտնելու համար հարկ է գիտակցել, որ հերոսակա-նության գաղափարը Երրորդ Հանրապետության օրոք անցել է երկու հաջոր-դական հանգրվաններ. 1990-ականներին, հիմնականում Ղարաբաղյան պա-տերազմի բովում, ծավալվել էր հայոց աշխարհընկալման համար ավանդա-կան՝ քաջ **Վարդանի** ու խոհեմ **Վասակի** բանավեճը, որն արտացոլում էր տվյալ դարաշրջանում երկրի քաղաքական կյանքի առանցքային դերակա-տարների՝ ՀՅԴ-ի և ՀՀԸ-ի դիսկուրսը: Սակայն 2000-ականներին՝ քաղաքա-կան ու գաղափարական իրողությունների մենաշնորհայնացման արդյուն-քում, այս օրինաչափ բանավեճը ձևախեղվեց ու արժեզրկվեց եկվոր «վի-կինգների» ու նրանց «պրագմատիկ» հետևորդների կողմից: Վերջիններիս թվում էր, թե իրենք կարող են համադրել Վարդանի հերոսականությունը Վասակի խոհեմության հետ, մինչդեռ իրականում նրանք ոչ Վարդանի քա-ջությունն ունեին և ոչ էլ Վասակի հեռատեսությունը: Պարզապես բրեժժևե-յան **«Մալայա զեմլյա»**⁵ հորինվածքին բնորոշ մտակաղապարներով սեփա-կանաշորհեղով պատերազմի հաղթանակները՝ վերջիններս հիմնավորա-պես ձևախեղեցին վտանգված ժողովուրդների համար **տիպական**՝ Վար-դան-Վասակ բանավեճը՝ այն ծառայեցնելով սուկ անձնական **կարիերայի** խնդիրներին: Հերոսականության գաղափարի նման արժեզրկումը ճանա-պարհ բացեց այն ճարպիկ-անսկզբունք տեսակի համար, որը հետաքրքր-ված է ոչ թե որևէ նպատակով ու տեսլականով, այլ վերջիններիս շահարկ-ման միջոցով հասարակությանն իր անձի շուրջը համախմբելու հնարավոր-ությամբ:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ 2000-ականներին Հայաս-տանում գերիշխող դիրքեր գրաված նման քվազի-հերոսը վաղուց հայտ-նի է հայկական մշակույթին: Հերոսական կեցվածքների պատրանքն ու պրագմատիզմի իմաստնությունը անձնական խնդիրների լուծմանը ծա-ռայեցնող այս տեսակը հարազատորեն ժառանգել է հանրահայտ **Քաջ Նազարի** կերպարի ռացիոնալ ընկալումից բխող **քաջնազարության**⁶ իրական գծերը: Թումանյանի հանճարեղ գրչի տակ անմահացած այդ կերպարի գիտական քննությունը վկայում է, որ Քաջ Նազարն այնքան էլ վախկոտ ու հիմար չէր, որքան պատկերացում էին մեր նախորդ սերունդ-ները: Դա ավանդական հասարակությանը բնորոշ գյուղական ճարպիկ-հաջողակն էր, ով անխուսափելիորեն պետք է «վերակենդանանար» երկ-րի քաղաքական կյանքի գավառականացման հետ միասին: Նման միջա-վայրերում քաջնազարներին բաժին ընկնող հաջողության գաղտնիքն ար-

5 Մա պատերազմի պատմությունը գործող իշխանության ու նրա առաջին դեմքի նպատակների ծառայեցնելու դասական օրինակներից մեկն է, երբ Լ. Բրեժժևեի՝ հետին թվով հերոսանայու գառամախտային ցանկությունը բավարարելու նպատակով սևծովյան ափամերձ մի փոքրիկ հողակտորի համար պայքարի տարեգրությունը ԽՍՀՄ-ում տրվեց գրեթե Ստալինգրադի ճա-կատամարտի նշանակություն: Խմբ.:

6 Այս հիմնահարցը քննության է ենթարկվում «Վեմ»-ի ներկա համարում հրապարակվող **Մերգեյ Ա. Աղաջանյանի** «Մեզ անձանոթ Քաջ Նազարը: Ըստ Հովհ. Թումանյանի համանուն հեքիաթի» ուսումնասիրության մեջ:

ԽՄԲԱԳԲԱԿԱՆ

Ե (ԺԵ) քառի, թիվ 3 (43) հուլիս-սեպտեմբեր, 2013

ՎԻՄ համահայկական հանդես

տացում է գոյության կռվի այն օրինաչափությունը, համաձայն որի՝ «Ընտրությունը կատարելների, բարձր տիպերի կողմը չէ, այլ միայն ավելի յարմարողների կողմը»⁷:

Մեր նորագույն քաջնազարների կենսագրականներն այնքան նման են իրար, որ գրեթե պատճենում են մեկը մյուսին: Ուստի անձերին «խնայելու» համար պարզապես թվարկենք վերջիններիս անցած ճանապարհի ուղենշային իրադարձությունները. 1980-ականներին նրանք «ներառվել» են խորհրդային-ամբողջատիրական, 1990-ականներին՝ հետխորհրդային-քրեական համակարգերում, 1990-2000-ականների սահմանագլխին ձեռք են գցել սովետային կապիտալ, իսկ ներկայումս զբաղվում են սեփական կերպարների «եվրավերանորոգմամբ»: Ստացվում է, որ այսօր մեր «կյանքի տերը» դարձած քվազի-հերոսը իրականում որևէ հերոսություն չի գործել, բայց Քաջ Նազարին բնորոշ հոտառությամբ միշտ «որսացել է» պահը և «հեծնելով» երկրում արձանագրվող դժվարությունների ու ձևախեղումների վրա՝ ապահովել է սեփական կարիերան: 1980-ականներին, երբ հայ պատանեկության ընտրանին ազգային-գաղափարական ոգորումների մեջ էր, այս տեսակն իրեն «առաջարկում էր» վարկաբեկված խորհրդային համակարգին, 1990-ականներին, երբ հայ երիտասարդության ընտրանին նահատակվում էր Ղարաբաղում, այս տեսակն իր ունեցած խորհրդային լծակներին գումարում էր հետխորհրդային կրիմինալ բիզնեսի հնարավորությունները և վերջապես՝ երբ պատերազմից նոր դուրս եկած Հայաստանը փորձում էր ոտքի կանգնել, վերջինս ծառայամիտ հոտառությամբ արդեն լուրջ դերակատարություն էր ստանձնել երկիրը նոր գաղութատիրության փոսի մեջ գլորելու գործում:

Հարց է առաջանում ու՞ր է այստեղ հերոսությունը, երբ ակնհայտ է ազգային նպատակը կամ տեսլականը սոսկ անձնական կարիերային ծառայեցնելու և հայրենակիցների ու հայրենիքի հանդեպ «փայլուն հաղթանակներ» արձանագրելու ձգտումը: Չէ՞ որ **հերոսությունը հավաքական նպատակին անհատականը ստորադասելու կամավոր բարոյական ընտրությունն է, որը գնահատվում է ոչ թե հերոսի, այլ պատմության կողմից:**

Սակայն պատմությունը և նրա գիտական ընկալումը՝ պատմագիտությունը, ռացիոնալ կատեգորիա է այնքանով, որքանով ի վիճակի է **հասկանալու** ոչ միայն ռացիոնալը, այլև իռացիոնալը և անգամ պարադոքսայինը: Որովհետև իրենք՝ արքետիպային հերոսներն ի վիճակի են դա անելու միայն այն պարագայում, երբ «...կլինի պատմության ավարտը, երբ վերջում կլինի հարությունը, երբ համաշխարհային պատմության գերեզմանոցից կհառնեն մեռելները և իրենց ողջ էությամբ կըմբռնեն, թե ինչու՞ են իրենք մոխիր դարձել, ինչու՞ են տանջվել կյանքի ընթացքում և ինչու՞ են արժանի հավերժության...»⁸:

Ու քանի դեռ մեր սերունդը չի կանգնել պատմության և Աստծո առջև, մեզանում հերոսի գործառույթները զավթել են անզուսպ կերպով «քեֆ անող» ու աշխարհի վրա ծիծաղող քաջնազարները: Որովհետև հերոսա-

7 **Ֆրանգլան Ե.**, Ն.Կ. Միխայլովսկին որպես փիլիսոփա-սոցիոլոգ, Եր. , տպ. «Լոյս», 1911, էջ 173:

8 Տե՛ս **Бердяев Н. А.** Философия свободы. Смысл творчества.-М. 1989. с. 127.

կանությունը պատմության իմաստի հետահայաց ընկալումն է՝ նրա **տերե-
րի** կողմից: Պատմությանը տեր կանգնելու հանգրվաններում է, որ կոփ-
վում ու հատունանում են այն անհատականությունները, որոնք իրենց հե-
րոսությամբ փորձում են **ներկայում** կանխել **անցյալի** կրկնությունը⁹: Ու-
րեմն՝ քանի դեռ մեր կյանքի ասպարեզը չեն գրավել հավաքական նպա-
տակին անհատականը ենթարկելու բարոյականային որակների կրողները,
իրական հերոսների հարության մասին խոսելն ավելորդ է: Ավելին՝ նրանք
իրենց գերեզմաններից այսօր կշտամբում են մեր սերնդին՝ Հայոց պատ-
մությանը տեր կանգնելու քաջություն չունենալու համար: Եվ այդ կշտամ-
բանքը լուրջ հիմքեր ունի, որովհետև մեզ շրջապատող առօրեականության
միասպաղաղ ընթացքը ժամանակավորապես բթացրել է հասարակության
ինքնապաշտպանական բնագոյը:

Սակայն հուսահատվելու կարիք չկա, որովհետև վերջին տարիներին
Հայաստանին բաժին ընկնող ներքին ու արտաքին ձախողումները՝ **մի
կողմից**, «քեֆ անելով» տարված քաջազարների՝ երկրի ճակատագրի
հանդեպ անտարբերությունը՝ **երկրորդ կողմից** և արտաքին մարտահրա-
վերների կուտակումը՝ **երրորդ կողմից**, գալիս են վկայելու, որ մերօրյա
քվազի-հերոսների՝ հայրենիքի ու պատմության վրա ծիծաղելու ժամանա-
կը նույնպես մոտենում է իր ավարտին: Իր ավարտին է մոտենում նաև
հասարակությանը համակած անտարբերությունն ու ապատիան: Ուրեմն
խնդիրն այն է, որ թույլ չտանք նման ավարտը վերածելու ազգային նոր ձա-
խողման և նոր սուգի: Քաջազարները կծիծաղեն աշխարհի վրա այնքան
ժամանակ, քանի դեռ 21-րդ դարում անգամ կունենանք ավանդական-պա-
տերնալիստական արժեչափերով առաջնորդվող հասարակություն, որը
կամավոր կերպով ասպարեզը հանձնել է իրեն միանգամայն համարժեք
«հերոսներին»:

Ուստի իրադարձություններից առաջ ընկնելու փոխարեն հոգու մեջ
խեղդելով ամոթի զգացողությունը՝ հարկավոր է գիտակցել, որ մեզանում
իրական՝ արքետիպային հերոսի վերածնունդը համապատասխան պայ-
մանների հատունացման կարիք է զգում: **Առարկայական** գետնի վրա այս
գործընթացն այսօր առաջ է գնում երկրին սպառնացող ներքին ու արտա-
քին մարտահրավերների մեծացմանը զուգընթաց: Իսկ **ենթակայական**
առումով ներկայումս նախևառաջ զգացվում է անցյալի ձախողումների
կրկնությունը բացառելու ահազանգը հնչեցնող և սերունդներին դեպի հե-
րոսացման ուղին մղող **հերոս-մարգարեների** կարիքը: Նրանք են ձևա-
կերպում ազգի իրական հերոսների նպատակներն ու խնդիրները և սե-
րունդների առջև վառում հաջողության հնարավորության լույսը, որն ի վի-
ճակի է ձեռքելու ամենաթանձր խավարը:

Հայաստանում ու նրա շուրջը ծավալվող գործընթացները համառորեն
հուշում են, որ հայ հանրույթը ընդհուպ մոտեցել է իր գարգացման այն
հանգրվանին, երբ նրա հոգեմտավոր դաշտում հաստատված աղջամուղ-
ջի ժամանակավոր թանձրացումը ակնհայտ է դարձնում լուսաբացի ան-
խուսափելիությունը: Նման պայմաններում իրական հերոսների ծնունդն

⁹ Օրինակ՝ Սուրբաշխի շրջանում գեղասպանության վերհուշը ծնունդ տվեց անցյալի կրկնու-
թյունը բացառող՝ Ղարաբաղյան պատերազմի հերոսներին:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ե (ԺԵ) քառի, թիվ 3 (43) հուլիս-սեպտեմբեր, 2013

ՎԻՄ համահայկական հանդես

արագացնելու ուղին մարդկային գիտակցությանը բնորոշ՝ ժամանակից առաջ անցնելու աստվածատուր հնարավորության օգտագործումն է:

Հերոսականությունը Հայաստանում խոր արմատներ ունի. նրանով են ներծծված մեր հողը, լեռները, լեզուն ու մշակույթը, ուստի հերոսների նշխարներով պարարտացած նման միջավայրը «մշակող» սերմնացանների աշխատանքն առաջիկայում հարուստ բերք է խոստանում: Իսկ դրա համար նրանց հարկավոր են ազգի բարոյականային որակները խտացնող այնպիսի տիպական կերպարներ, որոնք մեր ժամանակի քվազի-հերոսների բացարձակ հակադրությունն են կազմում:

«Վէմ»-ի ներկա և հաջորդ համարում ձեռնարկվող արմատական այլընտրանքի լուսարձակման նման մի փորձ է մեր Նոր պատմությանը հայտնի հերոս-մարգարեներից մեկի՝ **Սիմոն Զավարյան** անհատականության ու **զավարյանականության**՝ որպես երևութի բացահայտմանը նվիրված ուսումնասիրությունների հրապարակումը:

Խմբ.:

TIME AND ITS HEROS

Editorial